# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

---

գ. Շիրակամուտ

№—Ե -03/37

«28» 04. 2015թ.

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նալբանդյան

Ներկայացնում ենք Շիրակամուտ համայնքի ավագանու թիվ 11-Ա, 12-Ա, 13-Ն և 14-Ա որոշումները:

Առդիր 4էջ:

Համայնքի ղեկավար՝ Ս.Մազմանյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

## ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

### ՈՐՈՇՈՒՄ

„22 " ապրիլի 2015 թվականի N11-Ա

### ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ 2015Թ. ԱՊՐԻԼԻ 22-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „ Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով՝ ավագանին

Որոշում է

Հաստատել Շիրակամուտ համայնքի 2015թ. ապրիլի 22-ի նիստի օրակարգը

### ՕՐԱԿԱՐԳ
2015թ.ի ապրիլի 22-ի թիվ 4 նիստի

1.Ուսման վարձ փոխանցելու մասին:

2.Շիրակամուտ համայնքի 2015թ. բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

| Համայնքի ավագանու անդամներ | կողմ/5/ | դեմ /0/ | ձեռնպահ/0/ |
|---|---|---|---|
| Ս. Ա. Պապոյան | | | |
| Կ.Գ.Սաղաթելյան | | | |
| Ս. Կ.Պապոյան | | | |
| Հ. Ռ.Նալբանդյան | | | |
| Ա.Տ.Պապոյան | | | |

Համայնքի ղեկավար Ս.Մազմանյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

## ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

## ՈՐՈՇՈՒՄ
,,22 " ապրիլի 2015 թվականի N12-Ա

## ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ և 20-րդ կետերով, 44-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, համայնքի ավագանու 2014 թվականի հոկտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Շիրակամուտ համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 19-Ա որոշմամբ, հիմք ընդունելով Նարեկ Արամի Սաղաթելյանի դիմումը և ,,Համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Շիրակամուտ համայնքի ավագանին որոշում է.

1.Շիրակամուտ համայնքի 2015թ. բյուջեի 9/4/1 դասակարգման 4729 հոդվածից 2014-2015թ.թ.ուս.տարվա 2-րդ կիսամյակի համար ուսման վարձ փոխանցել Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարան՝ 50000/հիսուն հազար/ ՀՀ դրամ՝ Նարեկ Արամի Սաղաթելյանի համար:

2.Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում վճարել հատկացված գումարը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | կողմ/5/ | դեմ /0/ | ձեռնպահ/0/ |
|---|---|---|---|
| Ս. Ա. Պապոյան | | | |
| Կ.Գ.Սաղաթելյան | | | |
| Ս. Կ.Պապոյան | | | |
| Հ. Ռ.Նալբանդյան | | | |
| Ա.Տ.Պապոյան | | | |

Համայնքի ղեկավար՝ Ս.Մազմանյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

## ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ

,, 22 " ապրիլի 2015թվականի N 13-Ն

### ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով, և հաշվի առնելով Շիրակամուտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին

Որոշում է

1. Շիրակամուտ համայնքի 2015 բյուջեի պահուստային ֆոնդի 11/1/2 դասակարգման 4891 հոդվածից 15,0/տասնհինգ /հազար դրամ տեղափոխել 01/01/01 դասակարգման 4217 հոդվածին՝ օբյեկտի պահպանության համար:

| Համայնքի ավագանու անդամներ | կողմ/5/ | դեմ /0/ | ձեռնպահ/0/ |
|---|---|---|---|
| Ս. Ա. Պապոյան | | | |
| Կ.Գ.Սաղաթելյան | | | |
| Ս. Կ.Պապոյան | | | |
| Հ. Ռ.Նալբանդյան | | | |
| Ա.Տ.Պապոյան | | | |

Համայնքի ղեկավար՝ Ս.Մազմանյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

## ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

### ՈՐՈՇՈՒՄ

,, 22 " ապրիլի 2015 թվականի N14-Ա

### ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ և 20-րդ կետերով, 44-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, համայնքի ավագանու 2014 թվականի հոկտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Շիրակամուտ համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 19-Ա որոշմամբ, հիմք ընդունելով Շիրակամուտ համայնքի բնակիչ Հակոբ Կառլենի Պապոյանից ստացված դիմումը և համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Շիրակամուտ համայնքի ավագանին որոշում է.

1.Բավարարել համայնքի բնակիչ Հակոբ Կառլենի Պապոյանի դիմումը և համայնքի բյուջեից նրան հատկացնել սոցիալական օգնություն՝ 30000/երեսուն հազար / ՀՀ դրամ:

2.Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում վճարել հատկացված գումարը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | կողմ/5/ | դեմ /0/ | ձեռնպահ/0/ |
|---|---|---|---|
| Ս. Ա. Պապոյան | [signature] | | |
| Կ.Գ.Սաղաթելյան | [signature] | | |
| Ս. Կ.Պապոյան | [signature] | | |
| Հ. Ռ.Նալբանդյան | [signature] | | |
| Ա.Տ.Պապոյան | [signature] | | |

Համայնքի ղեկավար՝ [signature] Ս.Մազմանյան